

Դիակը կը մնար սակայն հիմա արտառոց դիրքի մը մէջ, թեւերը տարածուած, սրունքները տակին ու վրայ, գլուխը մէկ կողմ ու մարմինը նստին, մարմին մը հիւսար, խորուած, աւերուած ։

Վայրկեանի մը մէջ վերցուցին դիակը վերջապէս, ծրարի մը պէս փաթեթելով սաւանի մը մէջ, ու տարին սրահին ամփիթատորնը, թարմ նիւթ ուսանողներուն առաւօտեան աշխատութեանը ։

Սկսանք շնչել . թոյն մըն էր որ պակասած էր մեր ծծած օդէն ։ Մահճակալը հոն կը մնար սակայն պարագայ, ու այդ պարագայն կը բղիւէր ցուրտ ու տխուր տպաւորութիւն մը որ ամենուս վրայ կ'ազդէր դիւերուան թանձր լուսթեան մէջ ։

Ատտուան դէմ էր երբ շարժուեցանք մեր խոր Կ'նէն տխուր ձայներով : Տեսակ մը հաշկններ, աստիճ որ կը բարձրանային սրահին հետաւոր մէկ անկիւնէն ։

Խեղճ 19րդ խնդրեցած էր . Գամուած իր անկողնին մէջ « Մայրի՛կ, մայրի՛կ » կը պոռար լալով, ու տակաւին արցունքները այտերուն վրայ կը խնդար ահազին քաճաքանդով ։

Միտա թունտ ելած այս ահռելի տեսարանէն, ձգեցի անկողինս, մօտեցայ իրեն տեսնելու համար աւելի մօտէն այս ողորմելի կացութիւնը որուն կը հէքր զիս գաղտնի ուժ մը իմ մէջս ։ Յանկարծ ցցուեցաւ իր անկողնին մէջ դիտելով զիս խոշոր աչքերով որոնք կը պողթկային գլուխէն դուրս ։ « Մահ՛ը, մահ՛ը » կ'ըսէր զիս ցուցնելով պրկուած մասններովը, ու կը շարունակէր իր ողբերը ։

Իմանալուս կը լսուէին ամէն կողմէ, — « Պէտք է լռեցնել այդ խեղճ » կ'ըսէին ։

Անհար ըլլալով հանդարտեցնել սովորական միջոցներով հիւանդին ալլալած ջիղերը, մօրֆին ներմուծեցին, ինչ որ վերջ տուաւ անոր անանուս տանջանքներուն ։

Ես դարձայ անկողինս նետուեցայ, հալածուած անոր զարհուրելի աշուշներէն ։ Ու պաղ լուսթեանը մէջ որ հիմա սրահին վրայ կը տալուածէր՝ անոր ազաղակը կը լսէի « Մահ՛ը . . . մահ՛ը . . . »

Այդ միջոցին, պատահանները ճերմկալ սկրներ էին արդէն ։ Ատտու եղեր էր ։

ԻՆՉՈՒՄՆ ԷՐ ՈՅԺԸ

Դերվիշի պատմածները

Հեռու Հնդաստանում կար մի թագաւոր, որ շատ էր սիրում մեծ չնեքեր կանգնել, պալատ ու մզկիթ, պարտեզ, մատրասա, աշխարակ ու բուրգ . . . Ո՛չ միայն սիրում էր կառուցանել, այլ եւ գնալ դիտել գործաւորներին աշխատութիւնը եւ քաջալերել, նուէրներ ցրուել, ժամիրով կանգնել եւ գործը զննել ։

Մի օր էլ, երբ վեդիւրների հետ մի կողմը կանգնած, դիտում էր թէ ինչպէս գործաւորները քար էին շալակում ու կքուած, քրտնաթոր վերեւ բարձրանում, նկատեց որ նրանցից մէկը առանց օգնութեան, խոշոր քարերը մենակ շալակում, ուրախ ու զուարթ, երբք բերանին, նա՛ բարձրանում էր, անդադար կրում ։

Հուժկու չէր այդ աշխատաւորը եւ ոչ լայնալանջ . բայց մինչ միւսները տնքում էին ծանրութիւնների տակ, մինչ հուժկուները հագիւ շարժում էին եւ տխուր ու մաւլ, դանդաղ քայլեր անում, նա արագութեամբ ու մեծ դիւրութեամբ քարն էր շալակում, զուարթ էր երգ հնչեցնում եւ ժպիտը դէմքին՝ դէպի վեր ելնում ։

Թագաւորը զարմացաւ . ապեցին նաեւ մեծ վեդիւրները Ո՛վ էր այդ սարքը, որ տանում էր ամենածանր աշխատանքը՝ ժպիտն երեսին, զուարթ երգ բերնին եւ որ ո՛չ մի գանգատ ու հառաչ չէր հանում կրծքից . Ինչո՞ւն էր նրա ոյժը, զուարթութիւնը, դիմացկունութիւնը ։ Ինչն էր նրան որք տուողը, այդ տկար մարմնին տուեալ գործնող եւ շատ քաջերից, լայնալանջերից աւելի գործունեայ, աւելի աշխոյժ եւ կարիճ անող ։

— Ոստի՛ր, ո՛վ վեդիւր, դարձաւ թագաւոր իր փոխանորդին, զուշակի՛ր տեսնենք . Ինչո՞ւն է այդ գործաւորի ոյժի, զուարթութեան եւ տուրկունութեան խորին գաղտնիքը . ինչո՞ք է որ միւս այդ բոլոր հուժկու մարդիկ անքում են, հառաչում աւելի թեթեւ, մանր գործերից, իսկ դա, այդքան թուլակազմ, այդքան ողորմելի, սակայն միշտ զուարթ եւ միշտ արագաշնալ ։

Մեծ վեդիւր լռեց, շատ խոր տառած եւ չը կարողացաւ ոչինչ պատասխանել . — Ոստեց՛ք եւ զուճք, իմ խորհրդականք, դարձաւ թագաւորը միւս վեդիւրներին, ձեզնից ով ասի այդ գաղտնիքը, կը լինի իմ սիրելին եւ իմ մտերմորս ։

Բայց ո՞վ կարող էր ասել այն՝ ինչ որ միայն Աստուած գիտէր եւ ինչը, գործաւորը։ — Տէր իմ, խօսեց մի վեգիր, հրամայիր նրան աւելի ծանր գործ տալ, տեսնե՞ք նա նոյնպէ՛ս կ'երգէ՞ գործելիս եւ այդպէս ուրախ քարեր կը կրէ՞։ Փոսէ՞ նա աւելի եւ շատ ուժով է, քան երեւում է։

Ու թաղաւորը հրամայեց որ քարեղէն սիւնի մեծ պատուանդանը գործաւորը կանգնէ։

Սա մօտ եկաւ, նայեց խոշոր քարին, կանչեց Աստուծոյ մեծ, հզոր անունը, ժպտեց, կուացաւ եւ մի շարժումով գլորեց նրան սիւնի ստորտը։ Յետոյ սրեց քրանաթոր դէմքը եւ միշտ երգը բերնին՝ բարձրացրեց եւ դրեց սիւնի տակ։

Բոլորը ապշել էին։ Այնտեղ մի բան կար։ մի գաղտնի ոյժ անշուշտ, որով օժտուած էր չնչին գործաւորը եւ որից, բոտ երեւոյթին, ոչ արքան ունէր եւ ոչ վեգիրները։

Մօտ կանչեց արքան քաջ գործաւորին, փող տուաւ, զովեց եւ ապա հարցրեց։ — Ինչո՞ւնն է ոյժդ, գործաւոր կարի՛ն։ — Ձր գիտեմ, տէ՛ր արքայ, ժպտեց կարի՛նը, ես այսքան գիտեմ որ երջանիկ եմ, ո՛չ մի վիշտ չունեմ, գործում եմ ուրախ, ապրում եմ ուրախ։

Արքան այդ խօսքից ոչինչ չը հասկացաւ ու հրամայեց վեգիրներին՝ խորհրդի ժողովուել։ մտածել, փնտռել եւ գործաւորի ոյժի գաղտնիքը որոնել։ Եւ դրա համար հինգ օր ժամանակ տուաւ։

Մինչ խորհում էին ամբողջ սերունդեան այդ խելօք մարդիկ, վեգիրներէց աչեւորը, որ լաւ լսել էր գործաւորի ասած խօսքերը, հրաման ինդրեց մի օր հեռանալ, եւ մինչեւ երեկոյ Հասանի (այդ էր գործաւորի անունը) գործը դիտելուց յետոյ, մօտեցաւ նրան, ապա ընկերացաւ եւ կամեցաւ հիւր յիսել նորա տանը։

— Տէ՛ր իմ, ասաց Հասանը — ես մի աղքատ մարդ եմ. մի խրճիթ ունիմ. վայել է որ դու այնտեղ մտնես եւ իմ չոր, խեղճուկ ընթրիքին մասնակցես։

— Հոգ չէ, իմ որդի. ես ուզում եմ տեսնել խրճիթդ ու կինդ, գաւակդ ու կեանքդ, ուզում եմ ստուգել թէ իրա՞ւ վիշտ չունես եւ երջանիկ ես. իրաւ միշտ էլ զուարթ ես, միշտ երգը բերնիդ։

Եւ ծերունի վեգիրին Հասանը տուն տարաւ։ Երբ ներս էին մտնում, դրան առաջ երեւաց մի չգնաղ երիտասարդ կին, որ սիրալիւր ժպտը դէմքին, մի հրշակապանման մանուկ էլ գրկին՝ ընդ առաջ եկաւ, գլեցեց ամուսնուն, անկեղծ

սիրով համբուրեց նրան, գիրկը տուաւ մանուկը, յետոյ միշտ զուարթ՝ ներս տարաւ նրանց, ընթրիքը բերեց եւ այնպէս խնամովով, այնպէս մեծ սիրով կերակրեց, զգեց ամուսնուն, որ ծերունի վեգիրը երբե՛ք իր կեանքում այդքան չէր յուզուել։

Եւ երբ ընթրեցին մեծ զուարճութեամբ, հայրը առաւ մանուկին, նրա հետ խաղաց, նրան զուարճացրեց. մանուկն իր անմեղ, զուարթ ծիծաղով խրճիթը լցրեց, վեգիրին դիմեց, այնպէս որ վեգիրն ինքն էլ սկսեց զուարթանալ, մանուկի հետ խաղալ. իսկ կինը, այդ սիրող, պաշտող, չքնաղ ամուսինը, այնքան գորովով, այնքան ջերմ սիրով փայփայեց, զբաղեցրեց ամուսնուն, որ մեծ վեգիրը գոչեց գմալացած։

— Վկայ է Աստուած, վկայ՝ մարգարէն, որ այսքան պատուական ու սիրող կին երբե՛ք չեմ տեսել։

— Եւ այսքան՝ իր կինը պաշտող ամուսինն էլ, աւելացրեց կինը՝ դուին իր ամուսնոյ կրծքի վրայ դրած։ Ամուսինս ինձ սիրում է. մենք երջանիկ ենք, գո՛ւ, անտրտուն։ Եւ այստեղի անիրաւութիւնները մեր գոնից չեն մտնում, վախճանով սիրուց, համբարախուժիւնից. ցաւերը հաւաստում են, վշտերը հալածւում. մեր բըժիշկը սէնն է, մեր փրկիչը՝ սէրը...

— Վկայ է Աստուած, կի՛ն դու, խօսեց վեգիրը, վկայ՝ նրա մարգարէն, որ դու իրաւունք ունես. չը կայ մեծ բժիշկ, չը կայ մեծ քաջաբերիչ՝ քան սէրը, անկեղծ ու վառ, մըլտատեւ սէրը, որ իր ժպիտով հերոս է յիշում, քարեր է փշրում, արգելքներ ջարդում եւ որի տաղ մաշխարհն անգոր է, ցաւը մի թշուկ... Իրաւունք ունիս, կին դու. ես այժմ հասկացայ թէ մարդուդ ոյժը ինչո՞ւնն է. Ոյժը սիրով ծնունդ է. սէրն է միայն այն մեծ ոյժը, որ կարող է լեռներ շարժել, աշխարհը փոխել, բոլոր անիրաւութիւնները անգոր դարձնել եւ ամէն մի փոշի՝ վարդի փոխանակել...

Ասաց, հիացած ելաւ գնաց եւ ամէն բան պատմեց հօր արքային։

Արքան զարմացաւ եւ չը հաստացաւ։ Չէր տեսել երբեք անկեղծ սէր, որովհետեւ երբե՛ք չէր սիրուել՝ այլ միշտ վախ ազդել. չէր իմանում նրա ոյժը, որովհետեւ նրան չէին սիրել, այլ միշտ չողոցողով։

— Խեղճ կորցրել ես, փոմար ծերունի, գոչեց նա խկոյն, մի՞թէ կարծում ես որ Հասանի ոյժն հենց դրանումն է. Ո՞վ է աւելի սիր-

ուած՝ քան ես. չէ՞ որ այս բոլորը խնայարկութեամբ են անխարկիս առաջ. չէ՞ որ ես կանայք ունիմ եւ շատ որդիներ. մի՞թէ պիտի ասես թէ նրանք ոչ մէկը ինձ չեն սիրում . . .

Մկրտչին խոնարհուեց. կնանքիցը վախեցաւ եւ խոնամութեամբ՝ լուռ կացաւ :

— Գնա՛, գնա՛, արամարտութեամբ հետեցրեց նրան արքան, դու երազող ես, դու ծնրացել ես . . . եւ կը տեսնես որ սխալվում ես: Ահա ես կը հրամայեմ որ այդ կնոջն եւ որդուն հարեմս քաշեն . եւ կինը, եթէ ասածիդ չպի գեղեցիկ է, ինձ կը պահեմ, ու պիտի տեսնես որ դրանով ոչինչ չի պակասել Հասանի ոյժից, ու հրամայեց :

Հինգ ձիաւորներ իսկոյն Հասանի տունը չորհրդապետեցին, դուռը կտրեցին, ներս մտան դիշերով, ամէն բան տալին ու վրայ արին եւ Հասանի կնոջն ու որդուն հարեմ քաշ տուին :

Միւս օր առաւօտ արքան կանգնած էր նոյն շէնքի վրայ, երբ Հասանը տխուր եւ արտասուածաթոր՝ գործելու եկաւ :

Ամէնքը ժողովուած՝ նրան էին դիտում: Կուցաւ Հասանը, ուզեց էլի մի մեծ քար շարժել իւր տեղից՝ եւ չը կարողացաւ. Փորձեց աւելի փոքրը — բայց թեւերը կարկամել էին, ծնկները ծալուեցին, փոքր քարն անգամ տեղից չարժեւ չը յալողուեց :

Ու բարձրացաւ նա, յուսահատաբար ձեռքերը ցած թողեց, յետոյ կծկուեց գետին եւ աղիտորով ու սրտապատառ՝ հառաչեց, ասաց

— Ահ, էլ ոյժ չը մնաց . . .

Թիֆլիս

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ

ՑԱԽԻՆ ՏՈՒՆԸ

Հին ատենուան պատմութիւն

Ճամանչաւոր առտու մը, ծաղիկներու մէջ, իրարու հանդիպիր էին. Մէկը լեռնէն կ'իջնէր, սարի պէս ուղղաբերձ, աչքերը վառ ինչպէս փայլակը բարձունքներուն: Միւսը հովտէն կուգար, վազող ջուրներուն պէս մազերը վճիտ, հասակը ճապուկ ինչպէս երկայն վարդենիները :

Ջաւէն փայթած էր լեռներուն գագէն, փայ-

տերը որ երկնքին կը սպանան՝ անոր խրոխտ ըլլալ սորվեցուցած էին ու խիզախ: Մեծ անտառները՝ որոնք արեւուն կ'արգիլէին իրենց խորը թափանցել, վտանգին տարփանքը տուած էին անոր: Եւ սարսափը երբեք անոր մտեցած չէր: Կատարներին ի վեր մաղցեր, վրապանքու ալքը խոյացիր էր, եւ բոլոր գագանները դողաւար փախիր էին անոր աղեղին առջեւէն: Ինքն իսկ Աղեղ մըն էր. խանդով հիւսուած, քաջութեամբ պրկուած, եւ լարուած դէպի խորին որսատանը կ'անաքին :

Յիլաւ ծլած էր մանկական առուներուն ափունքը, եղէգներուն զով նուագին մէջ: Արեւը անոր մարմինը փայտախր, անոր մէջ ոսկի էր ցաններ: Մաղիկներն իրենց ժպիտը, թռչուններն իրենց թեւերը անոր անձին հաղորդէին էին: Թափանցիկ կապուտակ կենցաղի մը մէջ անոր օրերը սահած հալած էին քնքշաբար՝ ինչպէս ամառուան երկնքին մէջ բեհեզ ամպերը: Եւ ան եղեր էր կենդանի Գնալը, գեղձան լարերով, լոյսին մէջ բաբախուն :

Երբ գէժ առ գէժ ելան եւ երբ իրենց աչուներն իրարու բաղխեցան, իրենց թուեցաւ որ արեւը կը բիրապատկուէր, թէ բովանդակ աշխարհ կ'երգէր գինովցած, եւ թէ երկնքին ի վեր փարկը ր տեղարք Ստեղծագործ շունչը անցաւ իրենց վրայէն . եւ զգացին որ կը ծնէին: Իրենց սրտին մէջ աստղեր բացուեցան, իրենց մարմինը ցնծաց անմահական հոգովը հինաւուրց անտառներուն, եւ իրենց երակներուն մէջէն տիեզերքին արեւը հեւալով խայտաց: Ու երկու կնանքերը՝ դիցական տենդին մէջ՝ խառնուեցան: Եւ տարրերը, անոնց համարյոյն չորջր բերկրանքով հնչեցին :

Ան տտեղը, ճեմել ելան՝ ձեռք ձեռքի՝ գոյութեան մէջ ծայրէն մինչեւ միւսը: Յաղթական անցք մըն էր ան հարսներգու տիեզերքին մէջէն որ անոնց չորս բոլորը կը խնդար: Անոնց համարուն վրայ, վտակները կը ճուային որ պատկերներն իրենց ջուրին մէջ կախն, ծառերը հայրաբար գլուխներն կը ձօճէին, հորիզոնները կը փայտէին սիրապատար աչքերու պէս, եւ հովը անոնց մազերուն մէջ հէքեաթներ կը սուլէր :

Ջաւէն Յիլային համար ծովերուն խորը մը խորճեցաւ բուստ ու մարգրիտ քաղերու, յովաշներ խեղդեց անոնց աչուներուն մէջ անոր մանեակ հիւսուած, եւ եթէ անտառ մը անոր ճամբան գոցէր, ձեռքովը ծառերը կը փոցնէր որ ան հանդարտ անցնի: Եիլաւ, Ջաւէնին համար ծաղիկները կը փողկէր մազերուն խառնելու, սիրամարգ-